

## Էդուարդ Հովհաննիսյան

### ՂԱՐԱՔԱՂԻ /ԱՐՑԱԽԻ/ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐՈՒՄ»

**Քանալի բառեր-** Ղարաքաղ /Արցախ/, հայկական մելիքություններ, բնիկ ժողովուրդ, արխիվային վավերագրեր, ռուսական քաղաքականություն, մահմեդական կառավարում:

Արդի պատմագիտության հրատապ խնդիրներից մեկն, անշուշտ, աղբյուրագիտական հենքի ընդլայնումն է: Այս տեսակետից Ղարաքաղի /Արցախի/ պատմության լուսաբանության խնդրում հատկապես կարևորվում են աղբյուրագիտական հավաքածուները, որոնք հնարավորություն են տալիս բազմակողմանի վերլուծության ենթարկել պատմական տարաբնույթ հիմնահարցերը: Դրանցից մեկը, որը հրատարակվել է Ռուսաստանում XIX դ. կեսերին և կրում է Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի վավերագրեր<sup>1</sup> անվանումը, ամբողջությամբ կազմված է արխիվային վավերագրերի հիման վրա և պատմագիտական արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Ղարաքաղի հայկական մելիքությունների մասին: Չենք թաքցնում, վավերագրերում մեզ համար կարևորն առաջին հերթին, իհարկե, մելիքությունների հայկականության, արցախահայության տեղաբնիկ ժողովուրդ լինելու իրողության հաստատումն էր: Գաղտնիք չէ, որ մեր հարևան երկրի ողջ պատմագիտական կորպուսը «լծվել է» Ղարաքաղի պատմության անիվը իրենց կողմը թեքելու անհնարին ու անիմաստ գործընթացին:<sup>2</sup> Այդ տեսակետից ներկա հրատարակվածը նպատակ ունի նաև «Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի վավերագրերի» վկայակոչումով ցույց տալ այդ «հիմնավորումների» սնանկությունն ու հակագիտականությունը:

«Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի վավերագրերում» Ղարաքաղի<sup>3</sup> հայկական մելիքությունների մասին տեղեկություններին կարելի է հանդիպել արդեն անդրանիկ հատորում. Վրաստանի գծով նախարար, պետական խորհրդական Պ. Կովալենսկոյի՝ «Վրաստանի մասին» նոթերում, որտեղ առանձին բաժնով ներկայացված է Ղարաքաղում XVIII դ. վերջին տիրող իրավիճակը, կարդում ենք. «Ղարաքաղի տիրակալ Իբրահիմ խանը ծեր մարդ է, սակայն խելացի պարսիկ է: Իր Փանահ հորից հետո /տողատակում ծանուցում մահացել է 1790 թ. Է. Հ./ Ղարաքաղը ստացել է որպես սահմանափակ մասնակցությամբ ժառանգություն, որը դեռևս կառավարում էր հայ մելիքների կողմից և հնագույն ժամանակներից սկսած պահպանել էին իրենց անկախությունը»: <sup>4</sup> Այսինքն՝ Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի վավերագրերի հենց առաջին հատորում փաստվում է Ղարաքաղի հայկականությունը և անկախ լինելու հանգամանքը, ինչը պատմագիտական առումով կարևոր նշանակություն ունեցող արձանագրություն է և այս բազմահատոր նյութերում Ղարաքաղի պատմության, թերևս, ամենից կարևոր արժևորումներից մեկն է:

<sup>1</sup> Տե՛ս «Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի վավերագրեր» ժողովածուն, որն իր մեջ ներառում է ստվարածավալ 13 հատորներ, էջերի ընդհանուր ծավալն անցնում է 13500-ը: Հրատարակվել է 1866-1904 թթ. Նշանավոր կովկասագետ Ա. Բերժեի խմբագրությամբ: Գիտական շրջանակներում առավելապես հայտնի է АКАК /Акты археографической комиссии Кавказа/ անունով:

<sup>2</sup> Դեռևս 1999 թ. Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևը այսպիսի «իրահանգ» էր տվել Ադրբեջանի պատմաբաններին. «...պետք է ստեղծել այնպիսի գործեր, որպեսզի մշտապես և հետևողական կերպով ապացուցվի այն հողերի պատկանելությունը Ադրբեջանին, որտեղ այժմ տարածված է Հայաստանը: Մենք պետք է դա կատարենք: Մենք պետք է ձանապարհ բացենք ապագա սերունդների համար»: «Բակինսկի ռաբոչի», 11 փետրվարի 1999թ. Տես, էլեկտրոնային միջոց՝ <http://sumgait.info/>: Հասանելի է՝ [http://sumgait.info /caucasus-conflicts/nagorno-karabakh-facts/nagorno-karabakh-facts-5.htm](http://sumgait.info/caucasus-conflicts/nagorno-karabakh-facts/nagorno-karabakh-facts-5.htm).

<sup>3</sup> Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քննարկվող ժամանակաշրջանում Արցախը աղբյուրներում առավելապես ներկայացված է եղել որպես Ղարաքաղ, մենք կօգտագործենք Արցախի անվանման Ղարաքաղ տարբերակը:

<sup>4</sup> Տե՛ս «Акты собранные кавказской археографической комиссией». /այսուհետև՝ АКАК/, Тифлис, 1866, т.1, Документ N 34. «Записки с.с. Коваленского о Грузии», с.120.

Ղարաբաղի մասին այս անդրանիկ հիշատակության մեջ կարևոր մեկ այլ ընդգծում էլ կա. առաջին իսկ վավերագրում հաստատվում է մահմեդական իշխանության կողմից Ղարաբաղի հայության հայրենագրվման իրողությունը, ինչը ևս պատմագիտական առումով հսկայական նշանակության արձանագրում է. «Սակայն հետագայում, շարունակում է իր նոթերը Կովալենսկին, - Իբրահիմ խանը ուժեղացրեց իր իշխանությունը և այս **բնիկ տիրակալներին** /ընդգծումը մերն է՝ Է.Հ./ հեռացրեց Ղարաբաղից: Նա աչքի էր ընկնում ուժով և հարստությամբ. երկարատև և բավականին ամուր հարաբերություններ էր հաստատել հանգուցյալ վրաց թագավոր Հերակլի հետ և կարողացել նույնիսկ դիմակայել Աղա-Մահմեդի կողմից Շուշիի բերդի երկարատև պաշարմանը /տողատակում՝ հիմնվել է 1789թ.՝ Է.Հ./: Սակայն երբ ռուսական բանակները մոտեցան իր սահմաններին, նա սկսեց մերժենալու քայլեր կատարել և հավատարմության նշաններ ցույց տալ. ավելին՝ պատրաստակամություն հայտնեց համագործակցել մեզ հետ, որպեսզի արժանանա համառուսական Տիրակալի հովանավորությանը»<sup>1</sup>: Նոթերում Կովալենսկին ուշագրավ մանրամասներ է ներկայացնում նաև Ղարաբաղի հայերի մասին. «Հետագա իրադարձությունները աննպաստ ընթացք ստացան Իբրահիմ խանի համար: Պարսիկների արշավանքի ժամանակ գրեթե իր բոլոր հպատակներին, որոնք հիմնականում հայեր էին, նա ազատ արձակեց հարևան տարածքներ, մեծ մասամբ Վրաստան տեղափոխվելու համար, քանի որ նրանք զենք չունեին և չէին կարող տեղավորվել բերդում /իմա՝ Շուշի - Է.Հ./: Նա հույս ուներ, որ արշավանքի ավարտից հետո հնարավոր կլինի նրանց կրկին ետ վերադարձնել, սակայն նրանք ոչ միայն չվերադարձան, այլև տեսնելով թուլացած խանին, շտապեցին ապաստան գտնել իրենց մելիքների մոտ, որտեղ և այժմ բնակվում են»<sup>2</sup>: Այսքանով, սակայն, Կովալենսկոյի նոթերում հայկական թեման չէր ավարտվում: Վրաստանի գծով ռուս նախարարը առանձին բաժնով ներկայացնում է Ղարաբաղի մելիքներին. բաժինն այդպես էլ վերնագրված է՝ «Ղարաբաղի մելիքների մասին»: Այնտեղ կարդում ենք. «Ղարաբաղի հայկական մելիքները, որոնք այժմ գտնվում են Վրաստանում՝ մելիք Ջուռնուդը, նրա որդի Շահ-Նազարը, մելիք Աբովը, մելիք Հովսեփի որդին և մելիք Ֆրիդոնը՝ մելիք Բեգլարի որդին, **նրանք բոլորն էլ մելիքների կամ Ղարաբաղի իրական տիրակալների ժառանգներն են** /ընդգծումը մերն է՝ Է.Հ./: Նրանց թիվը հինգն է եղել և Հայկական թագավորության անկումից հետո, հնագույն ժամանակներից ի վեր պահպանել են իրենց տարածքների անկախությունը մինչև ներկա ժամանակները, երբ Իբրահիմ խանի հայրը, որի մասին հիշատակել ենք վերևում, տեղավորվեց նրանց մոտ և հետագայում նրանց բոլորին ճնշումների ու բռնությունների ենթարկեց»<sup>3</sup>:

Համոզվելու համար, թե ակնհայտ այդ իրողությանը որքան անհեթեթ բացատրություններ են տալիս մեր հարևան երկրի «պատմաբանները», հեռուն գնալ պետք չէ, դրանք ներկայումս ամենուրեք տարածված են ողջ համացանցում: Խնդիրն այն է, որ այդ նյութերի հեղինակները ոչ թե պատմությունից հեռու անձինք են, թեպետ այդպիսին կարելի է որակել ադրբեջանական «պատմաբանների ողջ բույլը», այլ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի աշխատակիցներ, որոնց պաշտոնական հաղորդագրություններից մեկում կարդում ենք. «Ղարաբաղի պատմության ձևավորումը որպես կոնկրետ մարզի անվանում և ադրբեջանական շրջան, մեզ թույլ է տալիս ավելի գիտականորեն բացատրել նրա ծագումնաբանությունը, /կարծես, գիտականը ապացուցել են, ավելի գիտականի մասին են գրում - Է.Հ./, քանի որ ադրբեջանական լեզվի մեջ «դարա-ն», բացի գույն նշանակելուց, նաև բացատրվում է որպես մեծ, անանցանելի... Այսպիսով, - ավարտում են իրենց «հայտնագործությունը» ադրբեջանցի «գործընկերները», - ինչպես Ղարաբաղը, այնպես էլ Ղարաբաղ բառը պատկանում է ադրբեջանական ժողովրդին»<sup>4</sup>: Փաստորեն, ըստ ադրբեջանցի պատմա-

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 120-121:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 123:

<sup>4</sup> «Карабах: Этимология, территория и границы». Էլեկտրոնային միջոց. <http://www.azerbaijan.az>. Հասանելի է [http://www.azerbaijan.az/portal/Karabakh/History/history\\_r.html](http://www.azerbaijan.az/portal/Karabakh/History/history_r.html)

բանների, ստացվում է, որ Ղարաբաղ բառը միայն արդեն բավարար է, որ այն համարվի ադրբեջանական ժողովրդի սեփականությունը: Սակայն, դժբախտությունն իրենց համար այն է, որ մտքի այսպիսի «փայլատակումներով» է լցված բառացիորեն ողջ հաղորդագրությունը:

«Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի վավերագրերի» առաջին հատորում ամբողջական ձևով ներկայացված է ռուսական արքունիքի հետ Ղարաբաղի հայկական մելիքների ունեցած առնչությունների ողջ պատկերը. դրանք լիարժեք պատասխան են տալիս այն հարցին, թե ինչու<sup>1</sup> և ի՞նչ պատճառներով Ղարաբաղի հայկական մելիքները թողեցին իրենց հայրենիքը և հայտնվեցին հարևան Վրաստանում: Ակնհայտ է նաև ռուսական արքունիքի ցուցաբերած հովանավորության քաղաքական և տնտեսական դրդապատճառները: Ավելին՝ վավերագրերում բացահայտվում են XVIII դ. վերջի և XIX դ. սկզբի Ղարաբաղի պատմությանը և, առաջին հերթին, հայ ժողովրդին վերաբերող առանցքային շատ հարցեր: Իսկ ամենից կարևոր ընդգծումը, մեր կարծիքով, այն է, որ գրեթե բոլոր վավերագրերում փաստվում է Ղարաբաղի հայկականությունը, հայ ժողովրդի դարերով այստեղ ապրելու և իր պատմությունը կերտելու իրողությունը:

Այդուհանդերձ, շարունակելով ներկայացնել հնագրագիտական հանձնաժողովի վավերագրերը Ղարաբաղի բնիկ հայկական մելիքների մասին՝ մեջբերենք 1801 թ. հուլիսի 28-ին ռուսաց թագավորին ուղարկված Կովկասի կառավարչապետ, գեներալ Կ. Կնորինգի զեկույցից մի փոքր հատված. «Այստեղ՝ Վրաստանում, ապաստանել են Ղարաբաղից եկած շատ հայեր՝ արտոնություն ստացած իրենց մելիքների հետ միասին, որոնք կարող են պահպանել իրենց նախկին կարգավիճակն ու սովորույթները»<sup>1</sup>:

Առաջին հատորի բաժիններից մեկում ներկայացված է Գյուլիստանի տիրակալ մելիք Ֆրիդոն Բեգլարովի նամակ-խնդրանքը ռուսական կայսրին, ընդ որում այն ևս բերված է ամբողջությամբ՝ առանց կրճատումների ու համառոտագրումների: Նամակն այնքան ընդարձակ է ու ծավալուն, որ համառոտագրումը ստիպված ենք մենք կատարել: Այսպես՝ նամակի սկզբում Ղարաբաղի հայազգի մելիքը նախ և առաջ ներկայացնում է քաղաքական այն դրդապատճառները, որոնք ստիպել են իրեն դիմելու ռուսաց տիրակալին և այնուհետև գրում է. «սրանից 20 տարի առաջ կոմս Սուվորովը գտնվելով Աստրախանում, այնտեղից նամակ է ուղարկել Ղարաբաղ՝ իմ հայր մելիք Բեգլար-Հովսեփին և հանգուցյալ կայսրուհու անունից առաջարկել, որ նա իր հպատակների հետ միասին հաստատվի Ռուսաստանում: Կայսրուհին նրանց պետք է ընդուներ իր հպատակության տակ, որին իմ հայրը պատասխանել է, որ երբ այնտեղ կուղարկվեն ռուսական հաղթական զորքերը, նա անհապաղ կհոգա ռուսական բանակի բոլոր կարիքները և ապա նրանց հետ միասին դուրս կգա Ռուսաստանի սահմաններ..., սակայն, դժբախտաբար, ճանապարհին նա սպանվել է լեզգիների դեմ ձակատամարտում: Այն ժամանակ ես մանկահասակ էի: Մի քանի տարի անց գեներալ Պոտյոմկինը, ժամանելով Կովկասյան գիծ և տեղեկացված չլինելով իմ հոր մահվան մասին, նրան գրում է, թե ընդառաջելով նրա ցանկությանը, ռուսական բանակը գնդապետ Բուռնաշովի գլխավորությամբ շուտով կմտնի Վրաստան և թող մելիքը պատրաստվի իր հպատակների հետ միասին դուրս գալու Ղարաբաղից... այդ նամակը ես ընդունեցի ուրախության արցունքներով, քանի որ իմ հայրն արդեն ողջ չէր...»<sup>2</sup>:

Գյուլիստանի մելիքն այնուհետև ներկայացնում է Ղարաբաղում տիրող իրավիճակը. «Շուշիի Իբրահիմ խանը, որը ոչ մի քրիստոնյայի չէր վստահում և նրանց նկատմամբ հազարավոր վերահսկիչներ ուներ, տեղեկանալով մելիքների կողմից գրված նամակների մասին և, որ ռուսական բանակը պատրաստվում է շարժվել Վրաստան, անմիջապես հասավ Գյանջա /Գանձակ- Է.Հ./ և առանց կանգ առնելու շարժվեց Վրաստան, հարձակվեց իմ վրա, հիմնահատակ ավերեց իմ կալվածքը և թալանեց ողջ ունեցվածքը: Այն ժամանակ տեսնելով այս ավերումը և զգալով իմ մոտալուտ վախճանը, թողնելով իմ հպատակներին, ես ընտանիքիս հետ միասին փախա Վրաստան,

<sup>1</sup> АККАК, т. т. I, Документ N543. «Всепоподданнейший рапорт ген.-л. Кноринга, от 28-го июля 1801 года», N 1, с. 430.

<sup>2</sup> Նույն տեղում, Документ 871. Прошение мелика Фридоны, владельца Гулистанского, к Е.И.В., с. 631.

որտեղ ծառայության անցա Վրաստանի թագավոր Հերակլի մոտ...: Այնուհետև տեղեկանալով, որ կոմս Ջուբովի գլխավորությամբ ռուսական հաղթական զորքերը մտել են Ղարաբաղ, ես գնացի նրա մոտ բանակ, որպեսզի ծառայելով ռուսական կայսերական արքունիքին, կարողանամ Պարսկաստանից Ռուսաստան բերեմ իմ հպատակներին, բայց քանի որ այս արշավանքը մեզ չազատագրեց այդ բարբարոսներից և ճանապարհին, երբ վերադառնում էի Վրաստան, Իբրահիմ խանի մարդիկ, որոնք ամենուր հետապնդում էին ինձ, բռնեցին և հանձնեցին նրա ողջ դաժանությանը»<sup>1</sup>: Նամակի վերջում մելիք Ֆրիդոնը հայցում էր ռուսաց կայսեր հովանավորությունը<sup>2</sup>:

Ավելի ուշ ռուսաց կայսր Պավել Ա-ին ուղղված մելիք Ֆրիդոնի խնդրանքին միանում է նաև Վարանդայի մելիք Ջումշուդը: Մելիքներն այն սկսում են Ղարաբաղում տիրող իրավիճակի ներկայացմամբ. «Շուշիում նստած Իբրահիմ խանը, որի հայրը... քոչվորների առաջնորդ էր, բազմաթիվ ճնշումներով և չարագործություններով տիրացավ ժառանգական մեր տիրույթներին և տեղեկանալով մեր և գեներալ Պոտյոմկինի հարաբերությունների ու մեր կողմից ռուսական Տիրակալին հավատարմության հայտնելու մասին, Աղվանքի կաթողիկոս Հովհաննիս և մելիք Բաղդամին մահապատժի ենթարկեց, իսկ մելիք Մեծուհին և իմ քեռուն՝ մելիք Աբովին, խաբեությամբ ձերբակալելով, նրանց տներն ավերեց և ողջ կալվածքները թալանեց: Եվ թեպետ մեզ հաջողվեց փրկվել թշնամիներից, սակայն տեղեկանալով, որ կոմս Ջուբովը ռուսական զորքերի հետ շարժվում է դեպի Պարսկաստան, մենք մելիք Ֆրիդոնին դեսպան ենք ուղարկել կոմս Ջուբովի մոտ, որպեսզի համատեղ գործողություններ սկսենք թշնամու դեմ: Սակայն Ջուբովի հեռանալուց հետո Իբրահիմ խանը վրեժ լուծեց մեզանից, ավերեց և թալանեց մեր կալվածքները, դաժանորեն պատժեց նաև մելիք Ֆրիդոնին՝ նրանից վերցնելով ողջ տիրույթները: Հետո այստեղ եկավ Աղա-Մուհամմեդը, որի վախից մեր հպատակները հեռացան իրենց բնակատեղիներից, մեզ բանտարկեց և մեր ձեռքից վերցրեց վերջին ունեցվածքը...»<sup>3</sup>:

Նամակի վերջում Արցախի մելիքները կրկին իրենց հավատարմությունն են հայտնում ռուսաց տիրակալին՝ խնդրելով վերջինիս հովանավորությունն ու աջակցությունը<sup>4</sup>: Սակայն նամակի առանձնահատկություններից մեկն այն է, որ մելիքները հավատարմության երդումներից զատ, ռուսական արքունիքին էին ներկայացնում հստակ առաջարկություններ, որոնք առաջին հերթին բխելու էին ռուսական արքունիքի շահերից: Այսպես, նամակում մելիքներն առաջարկում էին, որ ռուսաց տիրակալը իրենց և ողջ Ղարաբաղի մարզը ընդունի իր բարձր հովանավորության ներքո, մատնացույց էին անում այդ հովանավորության կարևոր արդյունքները, առաջին հերթին՝ Ռուսաստանի համար. «Այս մարզը ընդունելով Ձեր կայսերական հովանավորության տակ՝ Ռուք թույլ կտաք տարբեր վայրերում ապաստանած և ցրված հայերին վերադառնալու իրենց բնակավայրերը, ապրելու անվտանգ կյանքով և հույսով, որ ապահով են Մեծ տիրակալի կողմից և նոր ուժ կդառնան թշնամիներից պաշտպանվելու համար, որոնք նախանձում են Ձեր բարեկեցությանը /ընդգծումը մերն է՝ Է.Հ./»<sup>5</sup>:

Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի վավերագրերում առանձին փաստաթղթով /փաստաթուղթ N 874/ ներկայացված է Ղարաբաղի հինգ մելիքությունների վերաբերյալ մանրամասները՝ իրենց բնակավայրերի անուններով հանդերձ: Անկասկած է, որ ռուսական աղբյուրի կողմից բերված այս փաստաթուղթը պատմագիտական արժեք ունի և կրկին անգամ հաստատում է Ղարաբաղի մելիքների լիակատար իրավունքները այս տարածքների նկատմամբ: Կարդում ենք մեր կարծիքով ամենակարևոր ընդգծումը փաստաթղթում. «Այս ամբողջ տարածքը կոչվում է Ղարաբաղ»<sup>6</sup>- ասվում է փաստաթղթում և ապա՝ շարունակության մեջ մեկ առ մեկ ներկայացվում են Ղարա-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 631- 632:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, Документ N872. «Письмо Армянских меликов Джимшида Варандинского и Фридона Гулистанского к Е.И.В». с. 632.

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում, Документ 874. Имена и провинции пяти меликов Армянских, с.635.

բաղի հայկական մելիքական տները. «Նրանցից առաջինը մելիք Շահնազարի որդի մելիք Ջումշուդի տիրույթն է: Նրա տիրույթը կոչվում է Վարանդա և հայտնի է իր Շուշի բերդով: Նրա հետ է նրա որդին և մեկ յուզբաշի / հավանաբար, նկատի ունեն հարյուրապետ Պետրոս բեկին - Է.Հ./:

Երկրորդ մելիքը Աբովն է՝ մելիք Հովսեփի որդին: Նրա տիրույթը կոչվում է Իքիրմիդիոլեթ<sup>1</sup> իր Գյուլիստան բերդով: Նա արդեն իր հպատակների մի մասին հասցրել է տեղափոխել Ռուսաստան և նրանց տեղավորել է Վրաստանում՝ Գեորգի թագավորի հովանավորության տակ: Նրա հարազատ Մելիք Ֆրիդոնը վերոհիշյալ մելիք Ջումշուդի հետ միասին գտնվում են Վրաստանում:

Երրորդ մելիքը Ռոստոմն է՝ հարյուրապետ Ալավերդովի որդին, մահացած մելիք Մեծուլումի փոխանորդը, որը մելիք Ադամովի որդին էր և 14 տարեկան Ադամ անունով որդի ունի, նրանց տիրույթը կոչվում է Ջրաբերդ և թեպետ ծխերի թվաքանակով նա առավելություն ունի մյուս մելիքների հանդեպ, սակայն քանի որ մելիքը մանկահասակ է, ուստի մելիքությունների մեջ հայերը նախապատվությունը տալիս են մելիք Ջումշուդին:

Չորրորդ մելիքը Աբասն է՝ մելիք Բախտամի որդին: Նրա տիրույթը հայտնի է Դիզակ անվամբ:

Հինգերորդը մելիքը Ալավերդովն է՝ մելիք Միրզախանի որդին: Նրա տիրույթը հայտնի է Խաչեն անունով<sup>2</sup>: Սա դեռ ամենը չէ, փաստաթուղթը մելիքական տների մասին կարևոր այլ մանրամասներ էլ է հաղորդում. «Վերոհիշյալ մելիքներն իրենց տրամադրության տակ ունեն հարյուրապետեր, այսինքն՝ զինվորական հրամանատարներ, որոնց մի մասի պաշտոնն անցնում է ժառանգաբար, իսկ մյուսներն այն ստանում են ցուցաբերած խիզախության համար»<sup>3</sup>: Այսքանից հետո զարմանալ կարելի է մեր հարևան երկրի պատմաբանների «համարձակության վրա»՝ որևէ կերպ կասկածի տակ դնելու Ղարաբաղի հայկական բնակչության ունեցած անվերապահ իրավունքը իր հայրենիքի, առավել ևս Ղարաբաղի հայազգի մելիքների ունեցած դարավոր իրավունքները այս տարածքի նկատմամբ: Եվ, այդուհանդերձ, վերևում բերված փաստաթուղթը համարենք Ղարաբաղի հայկականությունն ապացուցող հերթական փաստաթղթերից մեկը:

Հաջորդ նյութը, որ ցանկանում ենք մեջբերել, ուղղակիորեն առնչվում է վերը բերված փաստաթղթի հետ: Վերնագիրն արդեն իսկ ամեն ինչ ասում է. «Նորին Մեծություն ռուսական թագավորի շնորհագիրը Ղարաբաղի հայկական մելիքներին»: Նրանում ասվում է. «Տերունական /օգտագործվել է *депжавной* բառը՝ Է.Հ./ և նշանավոր Ղարաբաղի մարզի բարեպաշտ մելիքներ Վարանդայի տիրակալ Ջումշուդ Շահնազարովին, Գյուլիստանի տիրակալ մելիք Ֆրիդոն Բեգլարովին և նշանավոր մարզի մյուս բոլոր տիրակալ մելիքներին, հարյուրապետներին և ողջ ժողովրդին մեր կայսերական բարեհաճությունը և սիրալիրությունը. հաճելիորեն տեղեկանալով մեր նախարարության զեկուցագրերից՝ ռուսաց տիրակալի և ռուսական արքունիքի հանդեպ Ձեր նվիրվածության և խնդրանքի մասին, որ թողնելով *նախկին Ձեր հայրենիքը* /ընդգծումը մերն է՝ Է.Հ./, որտեղ դուք հալածվում եք, թույլատրելի են համարում Ձեզ՝ ձեր հպատակների հետ միասին ապաստանել մեր կայսրության սահմաններում՝ Գեորգի թագավորի Քարթլիում և Կախեթում, որը գտնվում է մեր հովանավորության և գերագույն իշխանության տակ, և օգտագործել այն ձեր օգուտների և նրա սահմանների պաշտպանության համար...»<sup>4</sup>: Ռուսաց կայսեր Պավել Ա-ի շնորհագրում այնուհետև նշվում է. «Մենք՝ Մեծ Տիրակալը և Կայսրը հաճույքով արձագանքելով Ձեր խնդրանքին, Ձեզ ընդունում է մեր հպատակության և հովանավորության ներքո և իր բարեհաճությունն է ուղղում Գեորգի թագավորին՝ առանձնացելու համար ձեր կողմից խնդրած տարածքները Ղազախում, որոնք բնակեցված չեն, կամ էլ Ձեր հպատակ հայերի հետ

<sup>1</sup> Ծնթ. Գյուլիստանի մելիքությանը մահմեդականների կողմից տրված անվանումն է:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, Документ 875. Грамота Е.И.В. Армянским меликам. С.636.

միասին տեղավորել այն տարածքներում, որտեղ ցանկություն կհայտնեք դուք, միաժամանակ պահպանելով այն իշխանությունն ու արտոնությունները, որոնք ունեիք դուք ձեր հայրենիք Ղարաբաղում... Ձեզ, բարեպաշտ տիրակալ մելիքներ... հանձնում ենք մեր կայսերական շնորհագիրը և Վրաստանի մեր նախարարին՝ պետական խորհրդական Կովալենսկոյին հանձնարարում ենք հոգ տանել Ձեր կյանքի բարելավման ու ձեզ համար շահավետ պահանջների բավարարման համար: Մենք հույս ունենք հետագայում մեր հանդեպ Ձեր հավատարմության և նվիրվածության խնդրում և հայտնում ենք Ձեր թոշակների և շքանշանների վերականգնման մասին: Հաղորդում ենք Կայսերական մեր բարեհաճությունը: 2-ը հունիսի 1799 թ.»<sup>1</sup>:

Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի վավերագրերի անդրանիկ հատորի Ղարաբաղին վերաբերող նյութերում պատմագիտական առումով ուշագրավ փաստաթուղթ է նաև Փանծասարի Սարգիս եպիսկոպոսի նամակը /հետագայում կաթողիկոս Սարգիս Բ /1810-1815 - Է.Հ./ կառավարչապետ Կ.Կնորինգին 1801 թ. մայիսի 29-ին: «1781 թ. մեծ իշխան Պոտյոմկինը և Հովսեփ Արղության արքեպիսկոպոսը նամակ ուղարկեցին Ղարաբաղի մելիքներին և հարյուրապետներին այն բովանդակությամբ, որ Նորին Մեծություն կայսրուհու բարի կամքը տարածվում է հայ ժողովրդի և Ղարաբաղի մելիքների և հարյուրապետների վրա: Նամակը ստանալուն պես մելիքներ Ադամ Իսրայելովը, Աբովը, Հովսեփը և Դանիել Մելիքբեկովը՝ իմ եղբայրը, հավաքվեցին Հովհաննես կաթողիկոսի մոտ /խոսքը Հովհաննես Ժ Փանծասարեցի կաթողիկոսի մասին է /1763-1786/ - Է.Հ./ և նույն թվականի դեկտեմբերին խնդրանքով դիմեցին Նորին Մեծություն կայսրուհուն, մեծ իշխան Պոտյոմկինին և Հովսեփ արքեպիսկոպոսին: Պատասխանը ստացվեց 1782 թ. հունիսին: Այդ ընթացքում մելիք Ադամ Իսրայելովը մահացավ, իսկ Աբովը, Հովսեփը, Արմովը, Մելիքբեկովը Դանիելի և Գաբրիելի միջոցով երկրորդ անգամ նամակ ուղարկեցին կայսրուհուն»:<sup>2</sup>

Ինչպես նկատում ենք, Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի վավերագրերում ներկայացված այս փաստաթուղթը կրկին փաստում է Ղարաբաղի մելիքների՝ իրենց հայրենի երկրում ապրելու անհնարինության մասին, որի պատճառը մահմեդական տիրակալ Իբրահիմ խանն էր: Բնականաբար, վերջինս չէր կարող հանդուրժել հայկական մելիքների նման արարքը. «1784 թ. նոյեմբերի 5-ին չարագործ Իբրահիմ խանը, տեղեկանալով այս մասին, - գրում է այնուհետև Սարգիս եպիսկոպոսը, - սկսեց հարցաքննել Հովհաննես կաթողիկոսին և հիշյալ մելիքներին ու հարյուրապետներին և, մեղադրելով կաթողիկոսին, որ հայ ժողովրդին վերաբերող խնդիրը ձեռնարկել է առանց իրեն տեղեկացնելու՝ մահապատժի ենթարկեց նրան: Նրա մահից հետո ինձ և իմ եղբորը՝ մելիք Դանիելին և մյուս երեք եղբայրներին ձերբակալեց և իննամիս պահեց Շուշիի բերդում: Փանծասարի վանքը, իմ եղբայրների ունեցվածքը ինչպես գումարով՝ 5600 ռուբլի, այնպես էլ իրերով հանդերձ նա ևս բռնագրավեց: Նույնը կատարվեց նաև մելիք Բախտամի հետ, որի որդին այժմ գտնվում է Շուշիում»<sup>3</sup>:

Այսպիսով՝ «Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի վավերագրերի» անդրանիկ հատորում զետեղված արխիվային փաստաթղթերն ու նյութերը անհերքելիորեն ապացուցում են Ղարաբաղի մելիքությունների հայկականությունը, ինչպես նաև՝ արցախահայության բնիկ ժողովուրդ լինելու իրողությունը: Ուստի, Արցախի XVIII- XIX դարերի պատմությունը ադրբեջանցի պատմաբանների կողմից «սեփականացնելու» ջանքերն ու փորձերը իմաստազուրկ են և հակագիտական:

**Эдуард Оганесян, Армянские меликства Карабаха в «Актах археографической комиссии Кавказа»,**-Не секрет, что нынешняя историография Азербайджана всеми всеми возможными способами пытается исказить историю армянского Карабаха. Используя

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, Документ 883. Прошение, поданное ген.-л. Кнорингу епископом Саркисом Гандзасарским, от 29-го мая 1801 года., с.638.

<sup>3</sup> Նույն տեղում:

возможности интернета, они распространяют антинаучные тезисы об армянских меликствах Карабаха.

Целью настоящей статьи является не только доказать несостоятельность этих неимеющих никакого отношения с исторической наукой высказываний и мнений азербайджанских историков, но и обосновывать существование в Карабахе армянских меликств, а также армянского населения Карабаха, как коренного народа, жившего и творившего на этой земле тысячами. Знаменитый русский сборник «Акты археографической комиссии Кавказа», составленный исключительно на основе архивных документов, эту историографическую возможность дает нам полностью.

**Eduard Hovhannisyán, Armenian meliks of Karabakh according to "Acts of the Archaeological Commission of the Caucasus."**,-It's no secret that the current historiography of Azerbaijan is trying to distort the history of Armenian Karabakh by all possible means. Using the opportunities of the Internet, they disseminate antiscientific theses about the Armenian meliks of Karabakh.

The purpose of this article is not only to show the inadequacy of these statements and opinions of the Azerbaijani historians having no relationship with historical science, but also to justify the existence of the Armenian meliks of Karabakh, and Armenian population of Karabakh, as an indigenous people, who had lived and worked on this land for thousands of years. The famous Russian collection of "Acts of the archaeological Commission of the Caucasus" was prepared on the basis of archival documents and provides us with the necessary, historiographical opportunity.